**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/12-2**

ք.Երևան «24» «10» 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայությանն կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Շինկենտրոն» ՓԲ ընկերությունը ի դեմս Կ. Արզումանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **շինարարության նկատմամբ տեխնիկական հսկողության** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում

է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 730000 (յոթ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Շինկենտրոն» ՓԲԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Ք.Երևան, Աշտարակի խճուղի,45 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ Շահումյանի մ/ճ |
| Հ/Հ 900011029148 | 163028151468 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 03300044 |
| ՔԿ ծառայություն | Տնօրեն |
| Ա.Ղազարյան | Կ.Արզումանյան |
| ------------------------------------ | ------------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ. |

Հավելված N 1
«24» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/12-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայությունների | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 2 | 71351540/2 | ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց□ ՔԿՀ արտաքին և ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ցանցի վերանորոգում, սանհանգույցների և բաղնիքի, վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ արտաքին և ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ցանցի վերանորոգում, սանհանգույցների և բաղնիքի, վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացնել ըստ հավելված 1-ի ծավալների: | դրամ | 260000 | 1 | ք. Երևան, Արշակունյաց 2 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2019թ. |
| 5 | 71351540/5 | ՀՀ ԱՆ «Կոշ□ ՔԿՀ արտաքին և ներքին ջրահեռացման համակարգի, ճաշարանի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ արտաքին և ներքին ջրահեռացման համակարգի, ճաշարանի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացնել ըստ հավելված 2-ի ծավալների: | դրամ | 470000 | 1 | Արագածոտնի մարզ գ. Կոշ | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2019 թ. |

Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները սահմանվում է շինարարական աշխատանքների ավարտից հետո մեկ տարի ժամկետով:

Հավելված 1

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

**"Դատապարտյալների հիվանդանոց" Քրեակատարողական հիմնարկի արտաքին և ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ցանցի վերանորոգում, սանհանգույցների և բաղնիքի վերանորոգում**

| NN | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | ***1 ՀՀ ԱՆ "դատ.հիվանդանոց" թերապեվտիկ բաժանմունք 1-ին հարկ*** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Դռների բլոկների տեղահանում | մ$^2$ | 4,83 |
| 2 | Հատակի կերամիկական սալիկների քանդում | մ$^2$ | 40,40 |
| 3 | Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=40մմ 40.4մ2 | մ$^3$ | 1,62 |
| 4 | Հախճապակի քանդում պատերից | մ$^2$ | 97,00 |
| 5 | Ց/ավազե սվաղի քանդում պատերից | մ$^2$ | 97,00 |
| 6 | Միջնապատի քանդում 10սմ հաստությամբ | մ$^2$ | 7,74 |
| 7 | Առաստաղների և պատերի վրայից հին ներկի մաքրում | մ$^2$ | 107,90 |
| 8 | Գաջե սվաղի քանդում պատերից | մ$^2$ | 67,50 |
| 9 | Նույնը առաստաղից | մ$^2$ | 40,40 |
| 10 | Հիմնական պատում դռան բացվածքի լայնացում | մ$^3$ | 0,25 |
| 11 | Շին.աղբի հավաքում, պարկավորում, տեղափոխում 40մ հեռավորության վրա ձեռքով | տն | 10,82 |
| 12 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 15կմ հեռավորության վրա | տն | 10,82 |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | |
| 1 | Պատերի վնասված հատվածների մշակում բետոնակոնտակտ ամրացնող լուծույթով | մ$^2$ | 23,30 |
| 2 | B-15 դասի բետոնից հարթակ 25սմ հաստությամբ | մ$^3$ | 0,23 |
| 3 | 10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ | մ$^2$ | 18,66 |
| 4 | Շարվածքի ամրանավորում Ac-1 | տն | 0,04 |
| 5 | Մետաղապլաստե եվրոպական պրոֆիլներով դռների տեղադրում,60մմ հաստ., հուսալի փականներով և բռնակներով, սպիտակ գույնի փեղկով | մ$^2$ | 6,09 |
| 6 | Ջրամեկուսացում հեղուկ ապակիով | մ$^2$ | 40,40 |
| 7 | 40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ | մ$^2$ | 40,40 |
| 8 | Հատակների երեսպատում կերամիկական սալիկներով , ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ , գույնը և չափերը ըստ պատվիրատուի պահանջի | մ$^2$ | 40,40 |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Միաձույլ Ե/բետոնե բարավորի և դռան բացվածքի ուժեղացում | մ3 | 0,05 |
| 10 | Մետաղական գլածո տարրեր, թերթապողպատ և ամրաններ | կգ | 108,92 |
| 11 | Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով | $մ^2$ | 202,77 |
| 12 | Առաստաղների լավորակ ց/ավազե սվաղ ցանցով | $մ^2$ | 40,40 |
| 13 | Պատերի երեսապատում հախճասալով, ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ, գույնը և չափերը՝ ըստ պատվիրատուի պահանջի | $մ^2$ | 128,61 |
| 14 | Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | $մ^2$ | 74,16 |
| 15 | Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | $մ^2$ | 40,40 |
| | **Ընդամենը 1** | | |
| | ***2 ՀՀ ԱՆ "դատ.հիվանդանոց" թերապեվտիկ բաժանմունք 2-րդ հարկ*** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Դռների բլոկների տեղահանում | $մ^2$ | 4,41 |
| 2 | Հատակի կերամիկական սալիկների քանդում | $մ^2$ | 40,40 |
| 3 | Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=40մմ 40.4մ2 | $մ^3$ | 1,62 |
| 4 | Հախճասալի քանդում պատերից | $մ^2$ | 98,26 |
| 5 | Ց/ավազե սվաղի քանդում պատերից | $մ^2$ | 98,26 |
| 6 | Միջնապատի քանդում 10սմ հաստությամբ | $մ^2$ | 7,74 |
| 7 | Առաստաղների և պատերի վրայից հին ներկի մաքրում | $մ^2$ | 109,16 |
| 8 | Պատերից գաջե սվաղի քանդում | $մ^2$ | 68,76 |
| 9 | Նույնը առաստաղից | $մ^2$ | 40,40 |
| 10 | Շին.աղբի հավաքում, պարկավորում, տեղափոխում 40մ հեռավորության վրա ձեռքով | տն | 4,68 |
| 11 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 15կմ հեռավորության վրա | տն | 4,68 |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | |
| 1 | Պատերի վնասված հատվածների մշակում բետոնակոնտակտ ամրացնող լուծույթով | $մ^2$ | 25,30 |
| 2 | B-15 դասի բետոնից հարթակ 25սմ հաստությամբ | $մ^3$ | 0,23 |
| 3 | 10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ | $մ^2$ | 18,66 |
| 4 | Շարվածքի ամրանավորում Ac-1 | տն | 0,04 |
| 5 | Մետաղապլաստե եվրոպական պրոֆիլներով դռների տեղադրում,60մմ հաստ., հուսալի փականներով և բռնակներով, սպիտակ գույնի փեղկով | $մ^2$ | 4,83 |
| 6 | Ջրամեկուսացում հեղուկ ապակիով | $մ^2$ | 40,40 |
| 7 | 40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ | $մ^2$ | 40,40 |
| 8 | Հատակների երեսապատում կերամիկական սալիկներով , ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ , գույնը և չափերը ըստ պատվիրատուի պահանջի | $մ^2$ | 40,40 |
| 9 | Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով | $մ^2$ | 204,03 |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Առաստաղների լավորակ ց/ավազե սվաղ ցանցով | մ$^2$ | 40,40 |
| 11 | Պատերի երեսպատում հախճասալով, ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ, գույնը և չափերը` ըստ պատվիրատուի պահանջի | մ$^2$ | 129,51 |
| 12 | Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ$^2$ | 75,42 |
| 13 | Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ$^2$ | 40,40 |
| | **Ընդամենը 2** | | |
| | ***3 ՀՀ ԱՆ "դատ.հիվանդանոց" ճաշարան, բաղնիք, զուգարան, լվացքատուն*** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Դռների բլոկների տեղահանում | մ$^2$ | 10,50 |
| 2 | Կախովի առաստաղների և պատերի երեսապատված պլաստմասե շերտաթերթերով հատվածների ապամոնտաժում | մ$^2$ | 87,48 |
| 3 | Հատակի կերամիկական սալիկների քանդում | մ$^2$ | 55,48 |
| 4 | Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=40մմ 55.48մ2 | մ$^3$ | 2,22 |
| 5 | Հախճասալի քանդում պատերից | մ$^2$ | 117,15 |
| 6 | Ց/ավազե սվաղի քանդում պատերից | մ$^2$ | 117,15 |
| 7 | Միջնապատի քանդում 10սմ հաստությամբ | մ$^2$ | 23,57 |
| 8 | Առաստաղների և պատերի վրայից հին ներկի մաքրում | մ$^2$ | 163,68 |
| 9 | Պատերից գաջե սվաղի քանդում | մ$^2$ | 108,20 |
| 10 | Նույնը առաստաղից | մ$^2$ | 55,48 |
| 11 | Առկա բետոնե հարթակի  քանդում | մ$^3$ | 0,40 |
| 12 | Շին.աղբի հավաքում, պարկավորում, տեղափոխում 40մ հեռավորության վրա ձեռքով | տն | 18,10 |
| 13 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 15կմ հեռավորության վրա | տն | 18,10 |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | |
| 1 | Պատերի վնասված հատվածների մշակում բետոնակոնտակտ ամրացնող լուծույթով | մ$^2$ | 33,10 |
| 2 | B-15 դասի բետոնից հարթակի իրականացում 25սմ հաստությամբ | մ$^3$ | 0,46 |
| 3 | 10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ | մ$^2$ | 30,66 |
| 4 | Շարվածքի ամրանավորում Ac-1 | տն | 0,06 |
| 5 | Մետաղապլաստե եվրոպական պրոֆիլներով դռների տեղադրում,60մմ հաստ., հուսալի փականներով և բռնակներով, սպիտակ գույնի փեղկով | մ$^2$ | 13,23 |
| 6 | Ջրամեկուսացում հեղուկ ապակիով | մ$^2$ | 55,48 |
| 7 | 40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ | մ$^2$ | 55,48 |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Հատակների երեսապատում կերամիկական սալիկներով , ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ , գույնը և չափերը ըստ պատվիրատուի պահանջի | մ$^2$ | 55,48 |
| 9 | Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով | մ$^2$ | 256,01 |
| 10 | Առաստաղների լավորակ ց/ավազե սվաղ ցանցով | մ$^2$ | 55,48 |
| 11 | Պատերի երեսապատում հախճասալով, ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ, գույնը և չափերը` ըստ պատվիրատուի պահանջի | մ$^2$ | 146,54 |
| 12 | Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ$^2$ | 109,47 |
| 13 | Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով | մ$^2$ | 55,48 |
| | **Ընդամենը 3** | | |
| | ***1-1 Թերապեվտիկ բաժանմունք կենցաղային կոյուղի /ներքին ցանց/*** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Կերամիկական արտաքնոցի թասի ապամոնտաժում | հատ | 4,00 |
| 2 | Արտաքնոցի թասի լվացման տակառիկի ապամոնտաժում | հատ | 4,00 |
| 3 | Կերամիկական լվացարանի ապամոնտաժում | հատ | 4,00 |
| 4 | Կերամիկական զուգարանակոնքի ապամոնտաժում | հատ | 2,00 |
| 5 | Ф=100մմ թուջե կոյուղու խողովակների ապամոնտաժում | գմ | 30,00 |
| 6 | Ф=50մմ թուջե կոյուղու խողովակների ապամոնտաժում | գմ | 10,00 |
| 7 | Ф=50մմ hոսակների ապամոնտաժում | հատ | 4,00 |
| 8 | Հատակների B-10 բետոնե շերտի քանդում | մ$^3$ | 0,80 |
| 9 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ$^3$ | 1,38 |
| 10 | Բնահողի ետլիցք ձեռքով | մ$^3$ | 1,10 |
| 11 | Շին.աղբի հավաքում, պարկավորում, տեղափոխում 40մ հեռավորության վրա ձեռքով | տն | 0,45 |
| 12 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 15կմ հեռավորության վրա | տն | 0,45 |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | |
| 1 | Անցքերի բացում պատերում 150x150x150 | տեղ | 6,00 |
| 2 | Անցքերի բացում ծածկերում 150x150x300 | տեղ | 2,00 |
| 3 | Անցքերի բացում հիմքերում 400x400x800 | տեղ | 1,00 |
| 4 | Ф=110մմ պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակների մոնտաժում հատակի տակ, հողի մեջ /փորձարկումով/ | գմ | 20,00 |
| 5 | Ф=50մմ պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակների մոնտաժում հատակի տակ հողի մեջ /փորձարկումով/ | գմ | 3,00 |
| 6 | Ф=110մմ պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակների մոնտաժում պատերի, հատակների վրա և առաստաղի տակ /փորձարկումով/ | գմ | 21,00 |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Φ=50մմ պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակների մոնտաժում պատերի, հատակների վրա և առաստաղի տակ /փորձարկումով/ | գմ | 15,00 |
| 8 | Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով | հատ | 4,00 |
| 9 | Կերամիկական արտաքնոցի թասի մոնտաժում | հատ | 6,00 |
| 10 | Արտաքնոցի թասի լվացման տակառիկի մոնտաժում | հատ | 6,00 |
| 11 | Կերամիկական զուգարանակոնքի մոնտաժում ''',,Կոմպակտ,, | հատ | 2,00 |
| 12 | Φ=100մմ հոսակի տեղադրում | հատ | 7,00 |
| 13 | Ձևավոր մասեր Φ=110մմ | հատ | 35,00 |
| 14 | Ձևավոր մասեր Φ=50մմ | հատ | 15,00 |
| 15 | Φ=110մմ ստուգիչ-մաքրիչ | հատ | 3,00 |
| 16 | Φ=110մմ մաքրիչ կափարիչով | հատ | 3,00 |
| 17 | Φ=50մմ մաքրիչ կափարիչով | հատ | 4,00 |
| 18 | B-15 դասի բետոնից հարթակի իրականացում | $մ^3$ | 0,80 |
| 19 | Բացված անցքերի վերականգնում | $մ^3$ | 0,16 |
| 20 | Միացում գործող կոյուղագծին | տեղ | 1,00 |
| | **Ընդամենը 1-1** | | |
| | ***1-2*** ***Թերապեվտիկ բաժանմունք տաք և սառը կենցաղային և խմելու ջրամատակարարում /ներքին ցանց/*** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Φ=15մմ և Φ=20մմ պողպատյա խողովակների ապամոնտաժում | գմ | 18,00 |
| 2 | Φ=15մմ և Φ=20մմ պոլիպրոպիլենե ջրատար խողովակների ապամոնտաժում | գմ | 30,00 |
| 3 | Φ=15մմ փականների և ջրընդունիչ ծորակների ապամոնտաժում | հատ | 16,00 |
| 4 | Շին.աղբի հավաքում, պարկավորում, տեղափոխում 40մ հեռավորության վրա ձեռքով | տն | 0,08 |
| 5 | Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 15կմ հեռավորության վրա | տն | 0,08 |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | |
| 1 | Անցքերի բացում պատերում 150x150x500 | տեղ | 6,00 |
| 2 | Φ=25մմ պոլիպրոպիլենե սառը ջրի PRPN-10 խողովակների մոնտաժում լվացումով,քլորացումով և փորձարկումով | գմ | 4,00 |
| 3 | Φ=20մմ պոլիպրոպիլենե սառը ջրի PRPN-10 խողովակների մոնտաժում լվացումով,քլորացումով և փորձարկումով | գմ | 70,00 |
| 4 | Φ=20մմ պոլիպրոպիլենե ալյումինե շերտով տաք ջրի PRPN-10 խողովակների մոնտաժում լվացումով, քլորացումով և փորձարկումով | գմ | 47,00 |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | d=15մմ փականի տեղադրում | հատ | 10,00 |
| 6 | d=20մմ փականի տեղադրում | հատ | 1,00 |
| 7 | Անկյունային փականի տեղադրում | հատ | 8,00 |
| 8 | Լվացարանի ջրընդունիչ ծորակ-խառնիչի տեղադրում | հատ | 15,00 |
| 9 | Ջրընդունիչ ցնցուղով խառնիչ ծորակի տեղադրում | կ-տ | 7,00 |
| 10 | Ճկափող d=15մմ,l=500մմ | հատ | 8,00 |
| 11 | Փ=20մմ և Փ=25մմ պոլիպրոպիլենային ֆիթինգներ | հատ | 130,00 |
| 12 | Փ=20մմ և Փ=25մմ ջրագծերի միացում գործող ցանցին | տեղ | 3,00 |
| 13 | Բացված անցքերի վերականգնում | $մ^3$ | 0,07 |
| 14 | Խողովակների ջերմամեկուսացում ռետինե խողովակներով | մ | 103,00 |
| | **Ընդամենը 1-2** | | |
| | ***2-1 Ճաշարան, բաղնիք, զուգարան, լվացքատուն կենցաղային կոյուղի /Ներքին ցանց/*** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Կերամիկական արտաքնոցի թասի ապամոնտաժում | հատ | 3,00 |
| 2 | Արտաքնոցի թասի լվացման տակառիկի ապամոնտաժում | հատ | 3,00 |
| 3 | Կորամիկական լվացարանի ապամոնտաժում | հատ | 4,00 |
| 4 | Կերամիկական զուգարանակոնքի ապամոնտաժում | հատ | 2,00 |
